

ՈՒՇԱՑԱԾ ՀՐԱԺԵՇՏ

Հայրուկ Շամկեան



անի անգամ որոշած էի իր մասին գրել, մասին առաջ: Ընչտ չեմ գիտեր ինչու, բայց այն զգացումը ունեի, որ անելի շիտակ, անելի ընդունելի պիտի ըլլար: Բայց հիմա ոչ է առոր համար: Թերեւս արդէն իսկ ոչ էր, ամէն պարագայի...

Նախ՝ կէս-կատար պատկերներ են, որ կը ցայտեն, անցեալի շփոթ մշուշին մէջէն: Պատանեկութեան պրոտոր յուշեր: Ուրիշ տեղ, ուրիշ ատեն: Պատերազմի կեդտին եւ փտումին մէջ, կեդտտու եւ փտած թաղի մը մէջ, մասամբ լքուած շէնքի մը վերի յարկերէն մէկը, ուր, մութին մէջ, աստիճաններէն կը բարձրանայինք երկարօրէն, բարեկամներով հաւաքուելու եւ մի քանի ժամ մեր կորսուած ժամանակը միասին վատնելու համար: Երբեմն հոն կ'ըլլար ան: Երկու երկարատեւ ճամբորդութիւններու միջեւ, եկած կ'ըլլար քանի մը օր անցընելու իր ընտանիքին հետ: Ինք կը բանար դուռը, ամենայն պարգութեամբ: Հակառակ մեր փոքր տարիքին, մեզի հետ կը խօսէր յարգանքով, մեղմութեամբ, անկեղծ հասկացողութեամբ: Կը հետաքրքրուէր մեր անձնական վիճակով: Ինչպէ՞ս են մաման-պապան, ամէն մարդ լա՞ւ է, տունը... Յաջորդ այցելութեան, նորէն մեկնած կ'ըլլար ան: Ընտանիքը կը մնար հոն, այդ նեխած թաղին մէջ, այդ լքուած շէնքին վերի յարկերէն մէկուն մէջ: Չորս գաւակներ եւ կիւնը: Պզտիկ յարկաբաժին մը, նեղ ու խճողուած, ամէն կողմ գրադարաններով լեցուն... Յաճախ՝ ոչ ջուր, ոչ ելեկտրականութիւն: Հակառակ ինչ որ կարելի է կարծել, ապահովական միջոցառումները շատ զուսպ էին, երբեմն նոյնիսկ անգոյ: Միայն սաստիկ լարուածութիւններու ատեն կ'երեւային պահակներ: Վտանգի աստիճանը ծայրագոյն պէտք է ըլլար...

Այդ ժամանակ, դեռ ճիշտ չէինք գիտեր թէ ո՞վ էր ան: Բարեկամի մը պապան միայն: Միշտ բացակայ պապան: Յետոյ, ակումբային կեանքի մէջ անելի մխրճուելով, սորվեցանք հանգամանքները: Ոչինչ փոխուեցաւ անշուշտ: Նորէն ան դուռը կը բանար, երբ որ տունն էր, կ'ընդունէր մեզ ջերմութեամբ, մեր հետը կը նստէր ու կը խօսակցէր, անկեղծ հաճոյքով եւ հետաքրքրութեամբ, այնքան որքան կ'ուզէինք, մինչեւ որ մենք զինք ձգէինք եւ ուրիշ սենեակ անցնէինք: Երբեմն նաեւ ինք կը զգար, որ կը նախընտրէինք տարեկիցներով մնալ միայն, եւ ինք իր սենեակը կը քաշուէր, հիւրասենեակը յանձնելով մեզի:

Մեր ազգի ժամանակակից պատմութեան ամէնէն կա-

րող, ամէնէն զարգացած, ամէնէն խելացի ու հմայիչ դեկավարն էր ան: Կուսակցութեան պատմութեան ամէնէն բարդ ու դժուար ժամանակաշրջանին, գերագոյն մողղն էր ան, հիմնական դիրքապահը, խմբապետը: Ան լիովին արժանի էր այդ պաշտօնին ու պարտականութեան, այդ ահաւոր պատասխանատուութեան:

Ինչէ՞ր ըսուեցան, եւ նաեւ չըսուեցան, իր մասին... Մեր ազգը առհասարակ չի հանդուրժեր բացառիկ դեմքերը, անսովոր անձնատրութիւնները: Կ'երեւի անոնք շատ կը հակադրուին այլապէս տիրող ու տիրապետող զանգուածային միջակութեան, խեղճութեան, ճղճիմութեան: Իսկ մեր կուսակցական ներքին մշակոյթը յատկապէս կոշտ է ու վայրագ: Մենք նոյն ուժգնութեամբ, նոյն անվերապահ բրտութեամբ կը սիրենք զիրար, եւ զիրար կը պատռտենք: Դիւրին գործ չէ *յարապէս կոխը*:

Մեր այս իւրայատկութիւններով հանդերձ, նորէն արտակարգ է պարագան այս անձին... Անոր ներշնչած կիրքերը միշտ դասուեցան ծայրայեղութիւններու մէջ, ոչ-քանական, գեր-իրական մակարդակներու վրայ, գառանցանքի եւ առասպելներու աշխարհին մէջ: Այս աստիճան հաւաքական սայթաքումի մէջ, խորունկ ու երկարատեւ մտորումի մէջ, այլեւս ի գուր է փորձել ճշմարտութիւնը գտնել... Չեւով մը, երկրորդական է նոյնիսկ, անիմաստ է, ճշմարտութիւնը... Որովհետեւ, ամէն պարագայի, մէկ բան կը մնայ ստոյգ, մէկ բան կը մնայ անժխտելի, պարկեշտօրէն՝ անհերքելի: Այս անձը պէտք չէ որ այս ձեւով վերջանար: Ասիկա չէր, պէտք չէ ըլլար, անոր արժանի ճակատագիրը: Եւ այս վախճանի արտառոց բնոյթը, ճախողութիւնը, անհատական տարողութեամբ չէ որ կը նշուի այստեղ:

Այս անձին դեկավարութեան տակ, մեր ազգային գաղափարական ընթացքը վերադարձաւ իր ամէնէն հարագատ եւ զուտ ակունքներուն, վերամիացաւ եւ նոյնացաւ մեր ամէնէն փառաւոր ու պանծալի անցեալի հիմունքներուն հետ, խօսքերէ ու մտքերէ անդին՝ դարձաւ գործ ու արարք, աճեցաւ, զօրացաւ ու առաջացաւ, մեզի ապահովեց թէ՛ վերացական եւ թէ՛ կիրառական բազմաթիւ նուաճումներ, էական իրագործումներ: Ընդհանրապէս այս վերականգնած, այժմեացած, վերահաստատուած գաղափարական շարժումին, նոր շունչ եւ կեանք ստացաւ մեր ազգային ինքնութիւնը, նորէն իմաստ ստացաւ մեր գոյութիւնը, ուղղութիւն ստացաւ մեր պայքարը, անմիջական թիրախ ու գործնական նպատակ գտան մեր ճրգտումները: Յուսահատութեան եւ անտարբերութեան դեմ, նորէն տիրապետեցին ներշնչումը, եռանդն ու խանդավառութիւնը: Ուժասպառ ու շնչասպառ խարխափումներու տեղ, իմաստագրկուած ձեւակերպութիւններու տեղ, աշխտժ, կազմակերպուած, կանոնատիր ու հաստատաշաղխադացք մը սկսանք, դէպի մեր գերագոյն իղձերու իրականացումը, ամբողջացումը: Այս անգուգական դեկավարը, ջանքով ու աշխատանքով, յաջողեցաւ վերջապէս մարմնատրել մեր ազգային ու ազգայնական վե-

հագոյն գաղափարաբանութեան վերամշակումը, արդիականացումն ու վերածնունդը, մեր նորագոյն եւ հաւանաբար կարեւորագոյն զարթօնքը:

Բայց այս բոլորը վերջ գտաւ, այո՛, դժբախտաբար տեղ մը, իսկապէս վերջ գտաւ, խորտակուած յոյսերու եւ փշրուած երազներու մոլորումին մէջ: Եւ հակասականօրէն, այս վաղահաս վախճանը եկաւ ճիշտ այն պահուն երբ, ընդհակառակը, պէտք է սկսէր իսկական գործը, պէտք է որ անցնէինք յաջորդ էական հանգրուանին:

Այս ղեկավարին յանձն առած շարժումը, իր էական լրումին հասնելու տեղ, կասեցման ենթարկուեցաւ, բրդտօրէն: Արդարեւ, գոնէ տասնամեակ մը շարունակ վերակենդանացնել էտք անցեալի գաղափարական անհնդութիւնները, յետոյ դեռ մի քանի տարի Արցախի մէջ անմիջական իրականութեան վերածել էտք հայ ազգի ազատագրական ամենէն գուտ ձգտումները, յիշեալ շարժումին կը մնար վերանկայացած Հայաստանը ամբողջովին հունաւորել նաեւ 1918ի պատմական հոլովոյթի շարունակականութեան մէջ, եւ այդ՝ էականօրէն, բոլոր խորքի մակարդակներուն վրայ, եւ ոչ միայն արտաքին երեւոյթներու կամ նշաններու իմաստով...

Սակայն հայրենիքն էր որ, պաշտօնապէս, դեմ ելաւ այս անձին, դիրք բռնեց անոր դեմ, մերժեց ու վճռեց զայն: Այս կեցումաձքով ու վերաբերմունքով, Հայաստանը կը վտարէր ու կ'աքսորէր ոչ թէ սովորական անհատ մը, այլ ակնյայտ խորհրդանշիչը հայոց ազգային միակ իսկական հեղինակութեան, միակ ի գօրու, ազդու ու գործօն իշխանութեան: Կազմակերպութիւնն էր թիրախը, ոչ թէ անձը: Կուսակցութիւնն էր, որ կ'ուզէին քանդել, խորտակել՝ զայն այսպէս վայրագօրէն գլխատելով:

Ասիկա պատահմունք չէր: Ասիկա պատմական արկած չէր, պարզ դիպում մը չէր: Հայ ազգի թշնամիները, ներսէն եւ դուրսէն, շատ լաւ գիտէին, թէ ինչ կ'ընէին: Այս ղեկավարին վերակազդուած, վերարժարած շարժումը պէտք է որ դուրս մնար Հայաստանի սահմաններէն, հեռու մնար պաշտօնական հեղինակութենէն... Որովհետեւ «Դէպի Երկիր» կարգախօսը յուզական յօգուտ մը չէր, խոնարհ ամբոխները, ծրարները ուսին, վերադարձը ներքին համար հայրենի հողին: Այդ հանդարտ հրահանգը յստակ գորակոչ էր, բառին խորունկ իմաստով, լաւ հասկցողին համար: Եւ շատերը լաւ հասկցան զայն... Պէտք էր անպայման կեցնել այդ շարժումը, լռեցնել այդ հին զանգերը, որ կը սպառնային դարձեալ դօղանջել չլլայ թէ այս անգամ վերածուին վերջնական յարթանակի կանչերու... Բոլոր հաշիւները կը խանգարէր այս մարդը, իր ղեկավարած ուժերով:

Եւ մինչ այս բոլորը կը պատահէր, ճիշտ ո՞վ բողոքեց: Գիշտ ո՞վ ոտքի ելաւ, եւ ի՞նչ կատարեց, սրբագրելու համար այս անասելի կացութիւնը... Մեր ազգային գոյութիւնը կազմող բոլոր պաշտօնական բաղադրիչները մնացին անխօս ու անշարժ, տեսան, հասկցան, ու ոչինչ ըրին, դիտեցին ու լռեցին: Բոլորը դարձան մեղսակից,

ուղիակիօրէն կամ կրատրականօրէն: Մէյ մը որ, այս ճրգնաժամային առիթով, դիմակները վերջապէս վար ինկան, մէջտեղ ելաւ ահարկու երեսը մեր հաւաքական ապականութեան, դասալքութեան եւ ծայրագոյն հրաժարումին: Այս մարդը, իր մարմնաւորած գաղափարական էութեան պէս, բռնի աքսորի մէջ դատապարտուեցաւ լրնութեան եւ անգօրութեան, դանդաղ քայքայումի եւ հոգեվարքի, մինչեւ որ վերջապէս մեռնի ու թաղուի...

Իսկ այսօր, պէտք է որ ուրախանանք, թէ ան թաղուեցաւ հո՞ն, հայրենիքի հողին տա՞կ... Բայց ան այդ հողին վրայ պէտք է ապրէր, եւ կոտէր, այդ հողին վրայ պէտք է յարթանակէր, ոտքի եւ գօրեղ, այդ հողին վրայ պէտք է տեսնէր իր ղեկավարած շարժումի փառաւորումը, իր ջանքերուն վեհագոյն պսակումը: Ան այդ հողը պէտք է ամբողջովին ազատագրէր: Այս թաղումը իսկապէս տարօրինակ միախթարութիւն մըն է, որ կը վիճակուի վերոյիշեալ այդ ամբողջ գաղափարին, որ այս մարդը կը մարմնաւորէր... Ի՞նչ պէտք է հասկնալ այստեղ: Թէ գուտ ազգայնական շարժումը չի կրնար ապրիլ ու գործել հայրենիքի մէջ, բայց կրնայ միայն այդտեղ թաղուի՞լ: Գիշտ ի՞նչ է պատգամը հոս: Գիշտ որո՞ն պէտք է որ շնորհակալութիւն յայտնենք:

Մարդիկ խորապէս անարդար եղան այս անձին հանդէպ: Անարդար, դաժան եւ անողոք: Վստահաբար Պատմութիւնը նոյն ձեւով պիտի չդատէ զայն: Բացի եթէ Պատմութիւնն ալ կարծիք կը կազմէ մակերեսային դիտողութիւններու, աժան ըսի-ըսաներու, ձրի բամբասանքներու, անհեթեթ գրապարտութիւններու ու կամայական քրննադատութիւններու հիման վրայ...

Ահա, եղաւ: Հիմա չկայ ան: Եւ հիմա՝ ի՞նչ: Ո՞վ պիտի գտնենք, որո՞ն վերագրենք մեր բոլոր խնդիրներու արմատական պատճառները: Որմէ՞ պիտի պահանջենք որ ըլլայ կատարեալ, բացարձակապէս անթերի, պարզապէս սուրբ մը, եթէ ոչ զինք պիտի դրկենք ուղիակի դժոխք, մեռնելէն առաջ եւ վերջ: Հիմա որ ան գնաց, որո՞ւ պատասխանատու պիտի գտնենք մեր բոլոր ցատերուն, սրխալներուն, ծախողութիւններուն համար: Մէկ խօսքով, տեսապէս ո՞վ պիտի մեղադրենք հիմա, մեր վիճակին համար: Ո՞վ պիտի քաւէ մեր մեղքերը...

Քանի անգամ ուզած էի իր մասին գրել, մահէն առաջ: Ինձի կը թուէր թէ ատելի օգտակար պիտի ըլլար այդպէս ընել: Բայց հաւանաբար, արդէն ուշ էի, այն ատեն իսկ: Շատոնց մեռած էր ան: Ոչ միայն բժշկական իմաստով:

Բաներ կան, որ չեն շինուիր, մէյ մը որ կոտորուին: Հիմա, ինձի կը մնայ միայն յուշերու ջերմ ու դառն ապաստանը: Թող ուրեմն նորէն վերադառնամ այդ մութ օրերը, այդ մութ թաղին մէջ, եւ մագլցիմ այդ մութ շէնքին աստիճանները, որոնց ծայրը, լուսատու ժպիտով մը եւ կրակոտ աչքերով՝ ան պիտի բանայ ինձի իր տան դուռը, եւ զիս ներս ընդունի քաղցրօրէն, պահ մը հետս նստելու եւ խօսակցելու համար: